



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՇՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆԻ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դիտորդ մարմնի կազմը՝

- Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
- Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
- Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
- Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
- Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- Արա ՂԱԶԱՐՅԱՆ
- Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
- Գնեկ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
- Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
- Արա ՇԻՐԻՆՅԱՆ
- Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
- Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
- Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Ֆրի Նյուզ» հեռուստաալիքի 2022 թվականի հունվարի 21-ի՝ «Տիկին տխրահռչակուհին» ռեպորտաժի (հեղինակ՝ Դիանա Դավթյան) և «Ազատ շփում Գնեկ Սարգսյանի հետ» տեսալսողական հաղորդման (հեղինակ՝ Գնեկ Սարգսյան) վերաբերյալ

Դիմող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2022 թվականի հունվարի 25-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյանի դիմումը «Ֆրի Նյուզ» հեռուստաալիքի 2022 թվականի հունվարի 21-ի՝ «Տիկին տխրահռչակուհին» վերնագրված ռեպորտաժի (հեղինակ՝ Դիանա Դավթյան) և «Ազատ շփում Գնեկ Սարգսյանի հետ» տեսալսողական հաղորդման (հեղինակ՝ Գնեկ Սարգսյան) կապակցությամբ:

Դիմողն ակնկալում է ստանալ Դիտորդ մարմնի եզրակացությունը վերոնշյալ հաղորդումներում իր հասցեին հնչած արտահայտությունների, ինչպես նաև ԱԺ-ում լրագրողի պահվածքի վերաբերյալ:

2. Մինչ Դիտորդ մարմնին դիմելը՝ 2022 թվականի հունվարի 19-ին, ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանն «Ազատ շփում Գնեկ Սարգսյանի հետ» հաղորդման վերաբերյալ բողոք է ներկայացրել նաև ՀՌՀ-ին, իսկ վերջինս էլ հունվարի 27-ին դիմել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին՝ այս նույն հաղորդման ժամանակ հնչեցված արտահայտությունների վերաբերյալ ԴՄ դիրքորոշումը ստանալու խնդրանքով:

3. Ըստ դիմումատուի՝ ռեպորտաժի հեղինակ լրագրողն անհարկի

հետապնդել է իրեն ԱԺ շենքում, ապա ռեպորտաժում հնչեցրել է վիրավորական արտահայտություններ: Նույն օրը «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ընթացքում հնչել են իր արժանապատվությունն ու հեղինակությունը վարկաբեկող արտահայտություններ, կատարվել ստահող հաստատումներ:

4. 2022 թ. հունվարի 29-ին ԴՄ-ն դիմել է հեռուստաալիքին՝ տեղեկացնելով բողոքի մասին:

5. «Ֆրի Նյուզ» հեռուստաալիքի հիմնադիրները ստորագրել են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը՝ այդպիսով ընդունելով ԶԼՄ-ների Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, և պատրաստակամություն հայտնելով հրապարակելու Դիտորդ մարմնի որոշումը:

6. 2022 թ. փետրվարի 2-ին ԴՄ-ն նախաձեռնել է դիմումի քննարկումն առցանց ձևաչափով:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.4. Հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ

են եղել հրապարակումներում:

6.3. Ընդունել սեփական սխալները և պատրաստական լինել՝ ուղղելու դրանք:

6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ՁԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ կարծիքների ազատ արտահայտումը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել, մասնավորապես, այնոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի, հասարակական անդորրի պաշտպանության նպատակներով:

2. ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը կողմնակից է միջազգայնորեն ընդունված այն տեսակետին, որ քաղաքական և հանրային դեմքերը պետք է ավելի հանդուրժող լինեն իրենց հասցեին հնչող քննադատության նկատմամբ: Սակայն այդ քննադատությունը, գնահատող դատողությունները պետք է հիմնված լինեն փաստերի վրա և չհանգեն վիրավորանքի և ատելության խոսքի:

3. Դիտորդ մարմինը նաև հիշեցնում է, որ լրատվական նյութերում լրագրողի վերաբերմունքի կամ կարծիքի ներմուծումը հակասում է լրագրողական էթիկայի համընդհանուր սկզբունքներին:

4. Գնահատելով, որ «Ֆրի Նյուզ» հեռուստաալիքի լրագրողը փորձել է ստանալ իր լրատվամիջոցի հասցեին քննադատություն հնչեցրած քաղաքական գործչի՝ Լիլիթ Գալստյանի տեսակետը (Կանոնագրի 6.1 և 6.2 կետեր), այսուհանդերձ, հաշվի առնելով լայն հանրության շահերի տեսակետից այդ հարցի անկարևոր լինելը, համարում է, որ այն ոճը, որով լրագրողը հետապնդում էր պատգամավորին, անհարիր է լրագրողի էթիկական պահվածքին: Թեև ռեպորտաժի հեղինակի համառությունը պայմանավորված էր նաև Լիլիթ Գալստյանի՝ ավելի ուշ մեկնաբանություն տալու խոստումը չկատարելով, այդուհանդերձ, դա չի արդարացնում լրագրողի կողմից մասնագիտական էթիկայի նորմերի խախտումը:

5. Չցանկանալով այս եզրակացությամբ ևս տարածել հնչած վիրավորական արտահայտությունները՝ այդուհանդերձ, Դիտորդ մարմինը համարում է, որ ռեպորտաժի վերնագիրը, ոճը,

պաթետիկան, ընտրված բառապաշարը, մանավանդ քաղաքական այս կամ այն ուժին պատկանելությունն անհարկի շահարկելը և արտահայտությունները, որ հնչում են պատգամավորի հասցեին, ամբողջովին հակասում են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 5.2 կետում նշված՝ քաղաքական հայտանիշներով խտրականությունն ու ատելության խոսքը բացառելու պահանջին:

6. Ելնելով վերոհիշյալից՝ Դիտորդ մարմինը խնդրո առարկա ռեպորտաժը, ինչպես նաև նույն առիթով «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ընթացքում հնչած արտահայտությունները դիտարկում է ոչ թե որպես քննադատություն կամ սուսկ հաղորդման հեղինակի կարծիք, այլ լրատվամիջոցի հնարավորությունների օգտագործմամբ՝ մասնավոր հարաբերություններ պարզելու փորձ: Իսկ սա իր հերթին հակասում է շահերի բախումից խուսափելու համընդհանուր սկզբունքին:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդունելով իրենց իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, պատրաստակամություն են հայտնել՝ ԴՄ-ի որոշումը հրապարակելու իրենց լրատվամիջոցներում:

*Ընդունվել է 2022թ. փետրվարի 02-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝*

Դավիթ ԱԼԱՎԵԴԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության
գլխավոր խմբագիր

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության
գործադիր տնօրեն

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության
գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության
կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման,

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Անժեյա ՄՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության

խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

[ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը](#) ձևավորվել է
ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների
կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր
եզրակացություններում դեկավարվում է Հայաստանի
լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների
Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին,
վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած
լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: